ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2017թվականի N 32-Ա

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Անահիտ Հովսեփի Մանուկյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 407 հասցեի հողամասում 1998 թվականին ինքնակամ կառուցված S=246,17 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «ԳՈՒՅՔԱՉԱՓ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Անահիտ Հովսեփի Մանուկյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 407 հասցեի հողամասում 1998 թվականին ինքնակամ կառուցված S=246,17 ք.մ.. մակերեսու շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=60.40 ք.մ.մակերեսով այգետան կիսանկուղը, S=17.90ք.մ., S=19.70 ք.մ. ո S=17.90ք.մ. մակերեսներով բաց պատշգամբները, S=61.78 ք.մ.մակերեսով 1-ին հարկը, S=7.05 ք.մ մակերեսով աստիճանավանդակը և S=61.44ք.մ մակերեսով ձեղնահարկը կառուցվել են 200 թվականի մայիսի 15-ից առաջ, , ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Անահիտ Հովսեփի Մանուկյանին պատկանող 0,05հա մակերեսով, 07-051-0125-000 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Կոտայք, թաղամաս, 2-րդ փողոց, թիվ 407:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

16 հունիսի 2017թ
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, 094 31 39 77 1nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2017թվականի N33-Ա

ՍՈՒՐԵՆ ԶՈՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Սուրեն Զորիկի Սարգսյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Ուրց,, այգեգործական ընկերության, 2-րդ զանգվածի, թիվ 69 հասցեի հողամասում 1993 և 1995 թվականներին ինքնակամ կառուցված S=269,41 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Գույքաչափ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Սուրեն Զորիկի Սարգսյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Ուրց,, այգեզործական ընկերության, 2-րդ զանգվածի, թիվ 69 հասցեի հողամասում. (գործառնական նշանակությունը – բնակելի կառուցապատման, նպատակայինը՝ բնակավայրերի) 1993 և 1995 թվականներին ինքնակամ կառուցված S=269,41 ք.մ մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=42.93 ք.մ.մակերեսով այգետան կիսանկուղը, 64,02ք,մ,՝ 1-ին հարկը, S=44,89ք,մ,՝ ձեղնահարկը, S=16,94ք,մ,՝ բաց պատշգամբը, S= 6,81ք,մ,՝ աստիճանավանդակը, S=29,88ք,մ,՝ ծածկարանը, 36,72ք,մ,՝ ավտոտնակը, 22,15ք,մ,՝ լողավազանը, 1,04ք,մ,՝ զուգարանը և S=4.03 ք.մ.մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Ճանաչել քաղաքացի Սուրեն Զորիկի Սարգսյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս ,,Ուրց,, այգեզործական ընկերության, 2-րդ զանգվածի, թիվ 69 հասցեում գտնվող 500քմ մակերեսով մինչև 20% ավել օգտագործվող 15,62քմ հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

4. Սուրեն Զորիկի Սարգսյանին պատկանող 0,05հա մակերեսով, 07-051-0128-0006 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Ուրց,, թաղամաս, 2-րդ փողոց, տուն 69:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

19 հունիսի 2017թ.